ԹՈՒՄԱՆ (ԹՈՐԳՈՄ) ԹՈՒՄՅԱՆ (ԹՈՒՄԱՆՅԱՆ)
(Զոհվելու 110-ամյակի առթիվ)

Թուման Թումյանը ծնվել է 1879 թ. Շուշիում: Տեղի թեմական դպրոցն ավարտելուց հետո մեկնում է Մոսկվա և որպես ազատ ունկնդիր մասնակցում համալսարանի բնագիտական առարկաների դասախոսություններին: Ըստ Արամ Մանուկյանի՝ Թումյանը չի դիմանում Մոսկվայի սառնամանիքներին, հիվանդանում ու վերադառնում է հայրենիք: Շուշիում նա խմբագրում է «Կոկոն» վերնագրով թերթ, որը ազատագրական գաղափարներ էր տարածում Արցախում: Թերթի աշխատանքի արդյունքում Ղարաբաղի տարբեր շրջաններում կազմավորվում են կամավորական խմբեր, համալրվում են ՀՅԴ շարքերը: Թ. Թումյանին մեծապես օգնում է Եգոր Առստամյանը (Մենակը):

Առաջնորդվելով այն գաղափարով, որ ազատագրական պայքարին անհրաժեշտ են հմուտ զինվորականներ՝ Թորգոմը ինքնակամ անցնում է զինվորական ծառայության: Ստանում է պրապորշչիկի աստիճան՝ թնդանոթաձիգի մասնագիտությամբ: Այնուհետև Թորգոմը գնում է Կարս, ներկայանում Դաշնակցության «Զրաբերդի» ԿԿ-ին: ԿԿ-ն, հաշվի առնելով Թումյանի արժանիքները, նրան նշանակում է Կարսի մարզում կուսակցական, քարոզչական աշխատանքներ իրականացնող: Այդտեղ էին կենտրոնացած զենքի ու զինամթերքի պահեստները, ամրոցը, այն նաև մարտական խմբերի վարժեցման վայրն էր: Կարսում նա ծանոթանում է Քեռու, Սեբաստացի Մուրադի, Սեպուհի, Մենակի, Արամ Մանուկյանի և նշանավոր այլ գործիչների հետ, ովքեր նույնպես մարտական խմբեր էին պատրաստում դեպի Արևմտյան Հայաստան՝ Սասուն անցնելու նպատակով:

Թորգոմը, չնայած մեծ և օգտակար գործունեությանը, ձգտում էր օր առաջ մտնել Սասուն: Կարսի ԿԿ-ի համաձայնությամբ նա ձեռնամուխ է լինում խումբ կազմակերպելուն: Իր շուրջն է հավաքում սվազցիների 27 ձիավորից կազմված խումբը, այն կոչում «Մրրիկ»:

1903 թ. մայիսին խումբը դուրս է գալիս Կարսից և անցնում սահմանը: Նախքան մեկնելը մարտիկները երդում են տալիս: «Մրրիկ» խմբում ընդգրկված էին այնպիսի փորձառու մարտիկներ, ինչպիսիք էին Սեբաստացի Մուրադը, Քեռին, Տուրբախը, Կայծակ Առաքելը, Գյումուշխանցի Ավոն, Մեշետի Ավետիսը: Հաշվի առնելով Թորգոմի անձնական հատկանիշներն ու ռազմական գիտելիքները՝ նա նշանակվում է խմբի հրամանատար:

Սասունում «Մրրիկի» ժամանելը ուրախություն է պատճառում բնակչությանն ու զորավար Անդրանիկին:

1904 թ. գարնանը Թորգոմը Կայծակ Վաղարշակի հետ վերադառնում է Սասունից Կարս: Դաշնակցությունը շարունակում է Սասուն զինամթերք հասցնելու իր մարտավարությունը, թեև 1904 թ. հունիսին երկու խումբ մատնվել էր անհաջողության:

Կարսի «Ջրաբերդ» ԿԿ կազմավորում է 2-րդ խումբ՝ □Որսկան□ անունով՝ վստահելով Թորգոմի փորձառությանն ու հմտությանը, խմբի ղեկավարումը հանձնում նրան ու փորձված հին մարտիկ Որսորդ Գևորգին:

Այն ժամանակ, երբ «Որսկանը» ճանապարհին էր, Սասունում ապստամբությունն արդեն ճնշված էր: «Որսկանի» նպատակն էր մարտական գործողություններ ձեռնարկել սահմանամերձ շրջաններում, թուրքական ուժերի մի մասը ետ քաշելով Սասունից բերել սահման, թեթևացնել սասունցիների վիճակը:

1904 թ. հունիսի 30-ին խումբը հանգրվանում է Օլթիի շրջանի գյուղերից մեկում: Գյուղում պատարագ է մատուցվում, խումբը բաժանվում է երկու մասի, մեկը՝ Թորգոմի հրամանատարությամբ, մյուսը՝ Որսորդ Գևորգի:

Թորգոմի հրամանատարությամբ առաջնորդվող խումբը հասնում է հայկական Զարդանիս գյուղի մերձակա աղբյուրը և որոշում հանգստանալ: Ամբողջ գիշեր քայլած, հոգնած մարտիկներն անմիջապես քնում են: Նույնիսկ շալակավոր զինակիրներն են շալակած բեռները մի կողմ դնում:

Աղբյուրի մոտ եկած սահմանապահ ռուս զինվորները տեսնում են նրանց և իսկույն հայտնում իրենց հրամանատարին, ով ոտքի է հանում զորամասը: Ռուսների կրակը քանի գնում թեժանում էր, իսկ □Մրրիկ□ խմբին հրահանգված էր նրանց վրա չկրակել: Հայերը չէին կրակում, և ահա հայտնվում են թուրք զինվորները, որոնց տեղեկացրել էին ռուս սահմանապահները:

Թորգոմը հանձնվելու առաջարկությամբ երկու անգամ պատգամավոր է ուղարկում ռուս հրամանատարի մոտ, բայց անհաջող: Ռուսները չեն ընդունում պատգամավորներին, նրանց ուղարկում են պահակա-

նոց, իսկ կրակն ավելի սաստկացնում: Պարզվում է, որ ժամանել է սահմանապահ զորքերի հրամանատար, գնդապետ Բիկովը, ում հետագայում տեռորի ենթարկեց հայ վրիժառու Համո Ջանփոլադյանը:

Նույն օրը՝ ցերեկով, Թորգոմը փորձում է իրականացնել վերջին հնարավորությունը. «Խմբապետը դրոշակը առնելով 10–12 ընկերներով, գնդակների տարափի տակ գնաց դեպի ռուսաց զորքերը անձնատուր լինելու նպատակով. ռուսները բավական մոտ թողնելով միանգամից կրակեցին և 10 հոգի գետին գլորեցին, որոնց մեջ և թանկագին Թորգոմին, Դաշնակցության դրոշը ձեռին»: Խմբի 61 մարտիկից 27-ը զոհվում են, 6-ը վիրավորվում, գերի են ընկնում 14-ը, իսկ մնացածը փախչում են:

«Մրրիկ» ջոկատի մասին պահպանվել ու մեզ է հասել հետևյալ երգը.

ՂԱՐՍԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ

Ղարսից դուրս եկան, Թաղբուր ժողովեցան,
Նույն գյուղի մեջ կարգով շարվեցան,
Գիշերվա ժամի զանգերը դողանջեցին,
Քաջերը սուրբ հաղորդություն ստացան:

Քաջ Թումանը խնդրեց թշնամյաց –
Չլսեցին հերոսին, զոհվեցան միասին:*

Քաջերը կանգնեցին սուրբ սեղանի առաջ,
Երդվեցին միասին սուրբ դրոշը բռնած,
Քաջ խմբապետ Թումանը առաջն էր կանգնած,
Ձայն տվեց, եղբայրք, գնանք դեպ առաջ:

Շտապով գիշերը գյուղից դուրս եկան,
Արշալույսը բացվեց Բուրիկ աղբյուր հասան,
Անպիտան թշնամիները շուտով տեսան,
Երկու կողմից օգնության հասան:

Ղալա-Բողազից անշուշտ նկատեցին,
Թշնամիքը քաջերին պաշարեցին,
Օգնող չեղավ, անօգնական մնացին,
Հույսները կտրեցին ու այնպես զոհվեցին:

Քաջ Որսորդ Գևորգը չկտրեց հույսը,
Սուրբ դրոշակը պարզեց տասնապետ Պետրոսը,

Գնդակով թաղում էին թշնամյաց հույսը,
Անվեհեր կռվում էր Քյոսա հերոսը:

Ծերունի քահանան բռնել է խաչը,
Թումանից խնդրեց այսպես Գուրգեն քաջը,
Կրակ բանանք դեպի թշնամու շարքը,
Չի կարելի, ասաց խորամիտ քաջը:

Թումանյանցը մտածում էր մեր վիճակը,
Ասաց. մի բանաք սոխի վրա կրակ
Սոսկալի կը լինի մեր վիճակ,
Թող մեր եղբայրներ քններ մեր վիճակ[1]*:*

Կարսից Սասունի ապստամբներին օգնելը «Որսկանի» ձեռնարկած մարտական վերջին գործողությունն էր, որն անհաջողությամբ ավարտվեց:

Ստորև հրապարակում ենք Թուման Թումանյանի նամակները հարազատներին, որ պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում (ֆոնդ 314, նաև՝ «Ուրբաթ», 28. V. 1993):

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

Թորգոմի նամակները հարազատներին

– 1 –

<Հուլիս, 1902 թ.>

Սիրելի Քրիստափոր!

Ստանալով նամակդ շատ ուրախացա: Ես քեզնից բոլորովին չեմ նեղացած, թեև անտեղի կերպով կշտամբել էիր ինձ նախկին նամակումդ՝ շռայլությանս համար: Ես ինքս համոզված էի, որ քեզ այդպես են հավատացրել, և հենց այդ է պատճառը, որ նամակս պապին էի գրել և ոչ թե քեզ: Ոչ թե միայն չեմ նեղացել, այլև շնորհակալ եմ քեզնից, որ աշխատում ես հոգատարությամբ սխալներս ուղղել, շատ շնորհակալ եմ:

Փողի համար ես գրում, չափազանց շնորհակալ եմ. փողի կարիք չեմ զգում: Միայն ուզում էի մի ամսից հետո բերել տալ մի ձեռքի փոքրիկ սեփական ապարատ՝ յուր անհրաժեշտ պիտույքներով, որ կարող է ինձ վրա նստել 30–40 ռուբլի, ուզում եմ օֆիցերի հագուստներս ծախել, որովհետև չորս տարի անվնաս պահելը շատ դժվար կլինի, և այդ փո-

[1] *Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, աշխատասիրությամբ՝ Ա. Ս. Ղազիյանի, Երևան, 1989, էջ 131–132:*

դով ապարատ բերել տալ: Կարծում եմ այսպես լավ կլինի. դո՞ւ ինչ կարծիքի ես:

Իմ առողջությունը ավելի քան լավ է: Մանավանդ որ ահա երկու շաբաթ կլինի վարպետի հետ միասին պտտում եմ Շիրակը և տեսարաններ նկարում ալբոմի համար: Բագրատունյանց հարստության ժամանակ նշանավոր հանդիսացած վայրերում եղա, տեսա շատ հին եկեղեցիներ՝ թագավորների հրամանով արձանագրված, տեսա թագավորական գերեզմաններ, բերդի ներքնուղիները մինչև Արփաչայի (Ախուրյանի) հունը: Հայտնի միջնաբերդեր տեսա, որոնք յուրյանց անմատչելի դիրքով ու բանաստեղծական գեղեցիկ պատկերով հիացնում են ճանապարհորդին: Նախճվան գյուղից Ագարակ գյուղը գալիս ճանապարհը անցնում էր Անվո մոտով: Եթե ճանապարհս փոխեի, մինչև ի 15 որոպեն կանգնած կլինեի Բագրատունյաց փառքի ցիրցան եղած այդ բեկորների վրա, կանգնած կլինեի այն պատմական հետաքրքիր վայրում, որը տեսնելու համար շատ եմ երազել դեռ աշակերտական նստարանի վրա… Մենք Անիում նկարելու բան չունեինք, այդ նկարները վաղուց են հանված, եթե այնտեղ էլ գնայինք, պետք է ամենապակասը 5–6 օր մնայինք, և այն էլ հմուտ առաջնորդների ղեկավարությամբ, որպեսզի կարողանայի բոլոր հետաքրքիր տեղերը տեսնել և փափագս հագեցնել: Բայց քանի որ ժամանակ չունեինք այդքան երկար ուշանալու և առաջնորդելու ընդունակ ընկերակիցներ էլ չունեի, ուստի որոշեցի Անի չմտնել, հետաձգելով այդ մի ավելի հարմար ժամանակի: Ղարսից մինչև Անի ոտքով 8–9 ժամվա ճանապարհ է, այստեղ չկա մարդ, որ մի քանի անգամ եղած չլինի այդ հետաքրքիր վայրում: Չնայելով դորան՝ Անի գնալու ցանկացողներ կան, որոնց հետ երևի շուտով կերթամ տեսության: Չգիտեմ, Շիրակում փռված ավերակները, պալատները, դամբարանները, ավերված գյուղերն ու ամայի քաղաքները քեզ վրա ինչպիսի տպավորություն կարող են թողնել, միայն ինձ համար ես այս կասեմ, որ երբ Մրենի (բոլորովին անմարդաբնակ հին քաղաք) վիթխարի եկեղեցին մտա, աչքերս սևացան և հազիվ կարողացա մոտս ընկած մի քարի վրա նստել, քիչ էր մնացել ուշաթափվեի, ուշքս գլուխս հավաքելով աչքի անցրի եկեղեցու հետաքրքիր մասերը: Եկեղեցու բարձրությունը Ղազանչեցոց եկեղեցու երկու չափ կլինի, իսկ ընդարձակությունը նորա չափ, բայց որ զարմանալին է, եկեղեցին մեջը սյուն չունի և շինված է միայն քար ու կիրից – առանց փայտ ու երկաթի… Զախակողմյան խորանից պատի մեջ փորված սանդուղքներով բարձրացա և մտա եկեղեցու հաստ պատերում հարմարեցված կացարանների մեջ, այդ կացարանները պատերազմի ժամանակ ծառայում էին իբրև թաքստոցներ ու պաշարյալների կռվելու տեղեր, պատերի մեջ բուրգի երկայն ու նեղ պատուհաններ էին շինված, երևի պաշարված դեպքում հրաձգության և թշնամուն դիտելու համար: Եկեղեցու պատե-

րի մեջ եղած շինություններում կարող էին պատերազմի ժամանակ գետեղվել հազարից ավել մարդիկ, իսկ եկեղեցու մեջ՝ 2000-ից ավելի: Եկեղեցու հատակի տակ մեծ ջրամբար կա շինված պաշարյալների ապրուստի ջուր պահպանելու համար: Եկեղեցու պատերի վրա ներսից ու դրսից կային գեղեցիկ հին խաչքարեր և բազմաթիվ արձանագրություններ, որոնք մեր պատմության մի-մի էջերն էին կազմում: Եկեղեցուց դուրս գալով, անցանք մոտ 300 քայլ, տեսա թագավորական պալատի կանգուն մնացած միակ դուռն ու առաջի պատը, որի վերևը խոշոր տառերով արձանագրություն կար, որ Բագրատունյաց տան է պատկանում արքունիքը: Կանգուն մնացած այդ բեկորը մարդուն գաղափար է տալիս, թե ինչ հրաշակերտ է եղել այդ շինությունը… Այդտեղից անցա մյուս եկեղեցու ավերակները դիտելու, նայեցի թագա[վոր]ական դամբարանները, բայց էլ չկարողացա շարունակել դիտողություններս… Անցյալ փառքի պատկերը պարզվեց իմ առաջ, համեմատեցի այն մեր ներկայի, մեր այդ ավերակների, մեր անտուն, անտիրական վիճակի հետ և սիրտս այնքան լցվեց, որ արտասվեցա: Ավերակների մեջ բուի տպավորություն թողնող քահանայի որդին առաջարկեց շարունակել ավերակները դիտելու, բայց մերժեցի, առաջարկեց ճաշել, չկարողացա: Ամբողջ օրը կարծես մի մեծ դժբախտություն էր պատահել ինձ, այնքան տխուր էի ու լուռ: Հավատացիր, Քրիստափոր, եթե դու էլ տեսնես մեր այս պատմական տեղերը, կվառվես, կլցվես բուռն ատելությամբ դեպի մեր անգութ թշնամիները, որոնք միշտ եղել են թե դրսից և թե մեր միջից… Չես կարողանա սառնարյուն կերպով դիտել այն գերեզմանները, որոնք իրենց մեջ պարփակում են Հայոց թագավորներին ու թագուհիներին, հայ իշխաններին ու իշխանուհիներին, հայտնի զորավարներին ու նախարարներին…

Նախճվանը, որ համարվում է Ղևոնդ երեցի գյուղը, որտեղից Կամսարական իշխանի օգնական զորքով նա գնաց Վարդանին օգնության, այդ գյուղն ունի արձանագրություններով հարուստ մի եկեղեցի, իսկ եկեղեցու մոտ մի գետնափոր գերեզմանատուն, որտեղ մտա գերեզմանը դիտելու: Նավթի ճրագը ձեռներիս սանդուղքներով իջա գետնի տակ գտնվող երկու իրար կից խորանների մեջ, դոցանից յուրաքանչյուրում կար մի-մի գերեզման, որոնք շատ երկար էին և եռանկյունի տանիքաձև գագաթ ունեին: Դոցանից մեկի վրա կարդացի այս արձանագրությունը խոշոր և տեղ-տեղ եղծված տառերով. «Աստուածահիրամաւ եւսակոդ (՞) հրաժարմամբ ի սմա է հանգուցեալ ընդ հարս իւր երանելի տէր Արտաւազդ, որդի Հրահատայ-Աբուհուբաթ Կամսարական, իշխան Շիրակայ եւ ամուսին նորա Շուշանայ Մամիկոնեանի»: Արձանագրությունից երևում է, որ մյուս խորանում գտնվող գերեզմանն էլ Արտավազդի ամուսին՝ Շուշան Մամիկոնյանի (ոչ Վարդանի դուստր) գերեզմանն է: Այս տեղերը տեսնելուց ակամայից տխուր մտքեր են ծա-

գում մարդու մեջ և նա չի կարողանում հարմարվել ներկայի անձուկ վիճակի հետ… ուզում է փշրել վանդակը, ջարդել շղթաները և դարձյալ հասնել նախկին ինքնուրույնության, մարդավայել կյանքի…

Ասում եմ, որ այդ ավերակները, պատմական վայրերը ինձ վրա բոլորովին ուրիշ տեսակ են ազդում, չգիտեմ քեզ վրա ինչպես կազդեին: Այդ տեղերը այցելելիս մարդ շատ բան մոռանում և շատ բան մտաբերում է… Ջերմ բարևներս քեզ, փեսին, Աննային ու Վարդիկին:

Եղբայրդ՝ Թ. Թումյան (ստորագրություն)[2]:

– 2 –

4 հունվարի 1903 թ.

Սիրելի եղբայր իմ Քրիստափոր և քույր Աննա!

Որքա՜ն մեղավոր եմ ձեր առաջ իմ երկար լռությամբ, որի պատճառը բացատրել ավելորդ եմ համարում: Ես քաղաքից բացակա էի երկար ժամանակ, մի կարևոր գործով գնացել էի ի միջի այլոց շա՜տ հեռու, բայց անվտանգ տեղ: Այդ բացակայության ժամանակ մեր Ներսեսը գալով ինձ քաղաքում չէր գտել. այդ բանը հետո իմանալով՝ շատ ցավեցի: Այժմ մի քանի օրով եկել եմ քաղաք: Այսօր կերթամ Ալեքսանդրապոլ. այնտեղի երիտասարդությունը հրավիրել է, որ իրենց հետ միասին անց կացնենք տոները: Տոներից հետո կրկին կվերադառնամ Ղարս:

Որպեսզի նամակներդ ավելի ապահով հասնեն ինձ՝ Կարս, ուսուցիչ Խաչատուր Տեր-Ենոքյանցին տալ Թումանին:

Իմ առողջությունն ավելի քան լավ է, տրամադրությունս՝ բավարար: Խնդրում եմ երբեք անհանգիստ չլինեք իմ մասին: Չկարծեք, թե այստեղ զուրկ եմ սրտակից ընկերներից կամ բարեկամներից: Ունիմ ընկերներ, որոնք իմ մի խոսքով կյանքները վտանգի կտան, ունիմ անկեղծ ու սրտակից լավ ծանոթներ:

Այս րոպեից նորից հեռագիր ստացա Ալեքսանդրապոլից՝ որ այսօր անպատճառ ճանապարհվեմ:

Այժմ ժամը 3-ն է, ժամը 5-ին պետք է գնացքը ճանապարհվի, հարկավոր է փոքր-ինչ պատրաստություններ տեսնել. պետք է ձմեռային վերարկու գնեմ, գլուխս և երեսս խուզել տամ և ճանապարհվեմ:

Կարող եմ ուշանալ, շտապում եմ նամակս փակել:

Խնդրում եմ մանրամասն նամակ ձեր և ձեր գործերի մասին:

Ջերմ բարևներս ձեզ, փեսին, Վարդիկին և այլոց:

Եղբայրդ՝ Թ. Թումյան

---

[2] *Ստորագրությունից հետո այլ թանաքով ավելացված է՝ □1902 թ. հուլիս□:*

(ստորագրություն)

Հ.Գ. Բոլորիդ առողջությունը այժմ ինչպե՞ս է: Արդյոք Վարդիկը կազդուրվե՞ց, թե դարձյալ տկար է:

Թ.

– 3 –

1903 թ. փետր<վարի> 27

Սիրելի պապա և մամա!

Վաղուց է, որ ձեզ նամակ եմ գրել, բայց պատասխան չունեմ, չգիտեմ չեք ստացել, թե ինչ է պատահել, որ մի երկտողով չեք պատասխանում նամակիս:

Քրիստափորի նամակից իմացա, որ Մաշոն ազատվել է, չափազանց ուրախացա լսելով, որ երկունքը անվտանգ է անցել: Աչքներդ լո՛ւյս:

Ես ոչ մի տեղեկություն չունեմ մեր այնտեղի բարեկամներից, խնդրում եմ նամակի մեջ ամեն ինչ մանրամասն ու բազմակողմանի գրեցեք:

Իմ առողջությունը շատ լավ է, միամիտ մնացեք, միայն ձեր առողջությունից եմ նիգարան: Այժմ մնում եմ Ղարսում, որտեղ բավականին ընդարձակ ընկերական շրջան ունեմ, բոլորն էլ հարգանքով ու սիրով են վարվում հետս:

Սիրելի պապա! Խնդրում եմ չվշտանաս, որ ներկայումս էլ չեմ կարողանում քո այդ ծերության մեջ օգնության հասնել քեզ: Իմ փափագն է ամեն կերպ երախտահատույց լինել քեզ, քո տանջանքները թեթևացնել, քո հոգնած բազուկներին հանգստություն տալ, բայց դժբախտաբար հանգամանքները ճնշում են իմ մեջ այդ վսեմ փափագը, ես միայն այսքանս կասեմ, որ թող Ամենակարողը քեզ համբերություն ու մխիթարություն տա, թող Աստված մի այնպիսի ուժ ու կարողություն տա Քրիստափորին, Արտեմին ու Հովսեփին, որ նոքա էլ ինձ պես չվշտացնեն իրենց ծնողի սիրտը, այլ նորա վիճակը բարվոքեն, նեղությունները թեթևացնեն… Թող նոքա իրենց որդիական պարտականությամբ բուժեն քո սրտի այն վերքերը, որ ես եմ առաջացրել իմ ներկա ընթացքով:*

Իմ ներկա ընթացքը անդառնալի է… Ինչպես գինեմոլը, որին եթե նախատելու, հայհոյելու, բանտարկելու էլ լինեն, դարձյալ կշարունակի արբենալ, այնպես և ես. այժմ չկա մի բան, չկա մի ուժ, որ ինձ հեռացնե այս ընթացքից… Մնում է ձեզ միայն բավականանալ իմ առողջության մասին տեղեկություններ առնելով: Առայժմ մխիթարվեցեք այսքանով, որ ես առողջ եմ, ապահով՝ վտանգներից ազատ, ոչ մի բանի կարիք չեմ

զգում, միայն հարկավոր է ինձ իմ ծնողների օրհնությունը… որքան էլ հանցավոր լինեմ ձեր առաջ, այնուամենայնիվ ներողամիտ լինելով կարող եք ինձ խրախուսել, ուժ ու կարողություն տալ՝ դժվարություններին համբերել, վտանգներից ազատ մնալ: Օրհնեցեք ինձ ու իմ արարքը, որքան էլ դա ձեր սրտին դժվար թվա, «անառակ որդու» առակը հիշեցեք և ներողամիտ եղեք իմ վերաբերմամբ… Անհամբեր կսպասեմ ձեր նամակին: Ջերմ բարևներս բոլորիդ:

Մաշոյի առողջությունը ինչպե՞ս է:

Մնամ ձեր երախտապարտ որդի՝ Թումաս

– 4 –

30 / IV 1904 թ.

Միրելի Խուժիկ!

Ներիր, որ բավականին ժամանակ անհանգստություն պատճառեցի քեզ իմ լռությամբ: Դորա պատճառն այն է, որ այս վերջին երկու ամսվա ընթացքում կորցրել էի հոգեկան ու ֆիզիկական անդորրությունս և ամեն ջանք գործ էի դնում լրիվ իրագործելու պարտականությունս: Երևակայիր, որ այսօր երկուերեք ամսվա ընթացքում երեք օր շարունակ մեկ տեղ չեմ կարողացել մնալ, շարունակ ստիպված եմ եղել այս ու այն կողմ վազել, հասնել սահմանագլուխները և ընթացք տալ երկրացիրներին աջակցելու գործին: Թեև իմ նպատակն էր մայիսին ներս մտնել, սակայն ընկերներս ճնշում գործ դնելով վրաս հարկադրեցին միառժամանակ մնալ այստեղ և իբրև երկրի դրության ու պայմաններին նախածանոթ մի անձ և բարձրավանդակի ներկայացուցիչ՝ նպատակահարմար ուղղություն տալ ռազմական-աջակից խմբերին: Մինչդեռ ցարդ բավարար հաջողությամբ կատարած լինելով իմ գործը, այժմ անցնելու հերթը հասել է ինձ: Արդեն ամեն պատրաստություն տեսնված է, և մի քանի օրեն 60 քաջերով կանցնեմ մոտակա մի վայր տակնուվրա անելու, լուծելու նահատակված ընկերներիս վրեժը և մի անգամ ևս ապացուցելու օտարներին, որ հայն էլ գիտե իր ազատության համար խիզախորեն կռվել ու մեռնել…

Մնացեք բարյավ, մաղթեցեք հաջողություն: Հաջող ու կենդանի վերադարձի մեծ շանսեր կան, հուսով եմ որ մոտիկ ապագայում վերադառնալով կտեսնվենք: Իսկ եթե չդարձա էլ, մխիթարվեցեք նորանով, որ կենդանի եմ և շատ երկար կենդանի կմնամ մեր ժողովրդի սրտում: Հանգիստ հոգով ու մեծ ուրախությամբ դիմում եմ դեպի արյուն-արցունքով ներկված երկիրս՝ սրբազան պարտականությունս կատարելու:

Ջերմ համբույրներ Աթանեսին ու Մարգարա Էզնին:

Ընդունիր հրաժեշտի ջերմ համբույրս եղբայրդ՝ Թորգոմ

Հ.Գ. Մոռացա հիշել, որ անցյալներում ստացել եմ ուղարկածդ նամակն ու 75 ռուբլին:

Նույնը